

ՀԱՆԴԷՍ

ԲԱՑԽԱՆ ԶՐԽՈՒՂԻՆ ՓԵՌԴՈՍԻՈՑ ԵՒ

ԱՂԻԻՐԻՆ ԱՅՎԱԶԵԱՆ

ԱՌ

ՆԿԱՐԶԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶԵԱՆ

Ե Ր Գ



Երբոր Աստուած մեծ Հանճար
Քեզ պարգևեց երկնածիր,
Դուն եռանդով ի նըկար
Պարգևն ի գործ վարեցիր:
Լեռնակուտակ ծովուն ջուր՝
Քոյ վրժինիդ հըպաւոր,
Ի կըտուի ձիգ մաքուր
Պատկերացաւ ալէխոր:
Տաք, ցուրտ օդին՝ դոյն յարմար
Հանճարեցիր խընամով.
Զգեստաւորի անգոյն տարր
Քոյին ճարտար մատներով:
Առաւօտուն լուսափառ,
Նըսեմաստուեր գիշերոյն,
Տըւիր իրենց ճիշդ տիպար
Քո Հանճարով գերագոյն:
Այլ Քո ազգիդ՝ քաղաքիդ
Այսօր տըւիր մեծ նըշան,
Քըրխտոնեսայ Քո սըրտիդ
Եղբայրասէր զըթութեան:
Քանգի ինչպէս Հին Մովսէս,
Ի յանջըրդին յանապատ,
Բըղխեցուցեր Դու առ մեզ՝
Համեղ պայծառ ջուր առատ:

Կաֆա քաղաք վաղեմի,
Փռչիններու մէջ թողեալ,
Խընդաց այսօր ջըրալի
Յիշեց իրեն փառքն անցեալ:
Նըսեմացան յուշն և փառք
Հին բարեպաշտ հայուհեաց.
Մէլէք, Կուսին, Քափանակ
Հանդէպ տիկնոջն Այվազեանց:
Ձեր շնորհիւ, այո՛ Տէր,
Քաղաքացիք ամենայն
Վալլեցին ջուր կենսաբեր.
— Նախնեաց շիրիմք դող ելան. —
Յիսուս Փըրկիչ աշխարհի
Որո՞շ կերպով խոստացաւ
Վարձք՝ մի բաժակ պաղ ջըրի.
Անշափ է վարձքդ և անբաւ:
Երախտապարտ Քեզ Կաֆա
Մարմարիտն թէ արձան
Կանգնէ, դարձեալ քիչ կու գայ
Առատ տուրքիդ ի փոխան:
Այլ Քեզ արձան կենդանի
Դուն կանգնեցիր աննըման
Զըրիկդ անոյշ՝ որ հօտի
Նոր աղբիւրէն Այվազեան: